

ՀՀ կրթական համակարգը և զարգացման հեռանկարները

Տարբեր հարթակներում երբ գնահատական ենք տալիս կրթական համակարգին, փորձում ենք այն համեմատել ժամացույցի աշխատանքի հետ, քանի որ կրթական համակարգը որպեսզի աշխատի, պետք է աշխատեն կրթական բոլոր մեխանիզմները: Այն, ինչ մենք ունենք Հայաստանի Հանրապետությունում, դա լուրջ ձեռքբերում է և հիմք է հետագա աշխատանքների համար՝ դա կրթական ժամացույցի աշխատանքն է: Դա նշանակում է աշխատում են և մանկապարտեզները, և դպրոցները, և բուհական համակարգը: Համակարգը գործում է, ճանաչելի և ընդունելի է, համահունչ՝ աշխարհի ընդունած կրթական հարթակին: Սակայն այս ամենի հետ մեկտեղ կան մեծ մարտահրավերներ, որոնք կապված են կրթության որակի բարձրացման հետ: Մի բան է ունենալ համակարգ, մեկ այլ բան է ունենալ կրթական համակարգ, որը մրցունակ կլինի ոչ միայն աշխարհում այլ նաև հնարավորություն կտա, որ երկիրը կարողանա մրցունակ քաղաքացիներ և կրթական համակարգ պատրաստի:

Ընդհանրապես երբ խոսվում է հայապահպանության մասին, հիմնական խնդիրը լուծվում է հանրակրթության դաշտում: Այն, ինչ այսօր աշխարհում տեղի է ունենում, այսպես կոչված չորրորդ ինդուստրիալ հեղափոխությունից հետո, իր նոր շեշտադրումներն է անում: Եթե շատ տարիներ առաջ մարդիկ գիտեին գրել, կարդալ, հաշվել և համարվում էին գրագետ ու կրթված մարդիկ, ապա դա այսօր շատ քիչ է: Բանն այն է, որ մարդիկ մեծ մրցակցության մեջ են աշխարհի, ընդհուպ արդեն ռոբոտների հետ, իսկ ռոբոտները այդ ամենը մեզնից գուցե լավ են անում, որը բերում է կրթության ամբողջ պարադիգմայի փոփոխությանը ողջ աշխարհում: Դա մի կողմից մարտահրավեր է, մյուս կողմից լավ հնարավորություն Հայաստանի նման երկրների համար, որովհետև եթե մինչև հիմա կրթությունը ամբողջ աշխարհում զարգանում էր գծային, և երբ մենք փորձում էինք հասնել կրթությամբ առաջավոր երկրների հետևից, ապա հիմա ողջ աշխարհը փնտրտուքի մեջ է, հասկանալու համար, թե ինչպիսին պետք է լինի վաղվա կրթությունը, որը բոլորի համար անհայտ է: Այս պարագայում յուրաքանչյուր երկիր հնարավորություն ունի իր ասելիքը ասելու և գտնելու այդ ճշմարտությունը: Սա նշանակում է, որ հանրակրթության մեջ կարևոր են դառնում բարձր մակարդակի կոմպետենցիաները՝ գրելը, կարդալը, հաշվելը, վերարտադրելն արդեն բավական չեն: Բարձր կոմպետենցիաները ստեղծագործելու ունակություններն են, քննադատական մտածելակերպը, թիմային աշխատանքը, բարդ խնդիրներին հնարավոր լուծումներ տալը: Երբ խոսում ենք այս հմտությունների մասին, հասկանում ենք, որ դա պետք է կրթության մեջ դառնա պարտադիր բաղադրիչ: Մենք չենք կարող մեր քաղաքացուն դուրս թողել այդ համակարգից, այսինքն պիտի ձևավորենք մրցունակ քաղաքացի և երկիր: Այս իմաստով մենք հիմա ամբողջությամբ վերանայում են կրթական ծրագրերը՝ շեշտը դնելով թվարկված հմտությունների զարգացման վրա: Սակայն պետք է չմոռանալ, որ հանրակրթության մեջ 3 հիմնական բաղադրիչ կա. խոսքը գիտելիքի փոխանցման, հմտությունների զարգացման և արժեհամակարգի ձևավորման մասին է: Այս երեք բաղադրիչն էլ կարևոր են և հավասարաչափ պետք է լինեն:

Երբ մենք խոսում ենք հանրակրթության մասին հասկանում ենք, որ այն պետք է լինի ազգային: Մենք չենք կարող վերցնել արդեն կայացած կրթական ծրագրերը, որոնք ապացուցել են իրենց կայունությունը աշխարհում, ուղղակի ներդնել կամ կիրառել Հայաստանում: Ինչու, որովհետև, երբ մենք խոսում ենք հայկական կրթության մասին, խոսքը միայն հայոց լեզվի մասին չէ: Վիլյամ Սարոյանը գրում էր անգլերենով, բայց գրում էր հայեցի: Այսինքն լեզուն պարտադիր պայման է հայեցի կրթության համար, բայց կան նաև այլ կարևոր պայմաններ, որոնցից մեկը նպատակադրումն է, որտեղ հանրակրթությունը իր առջև նպատակ է դնում առաջին հերթին ՀՀ քաղաքացու ձևավորումը: Աշխարհում շատ լավ կրթական ծրագրեր կան, բայց չկա մի ծրագիր, որն իր առջև նպատակ է դնում ձևավորել ՀՀ քաղաքացի: Երկրորդ կարևոր պայմանը, թե ում ձեռքում է գտնվում կրթական համակարգի զարգացման և փոփոխության բացառիկ իրավունքը: Երբ մենք խոսում ենք կրթության մասին, իբրև երկրի կայունացման, ինքնության, հայապահպանության զարգացման գործիք, ապա հասկանում ենք, որ այդ լծակները ամբողջությամբ պետք է լինեն մեր ձեռքերում, և մենք պետք է որոշենք, թե կրթությունը որ ուղղությամբ է զարգանում: Այս իմաստով ազգային կրթակարգի ձևավորումը, ամբողջ կրթական համակարգի, ծրագրերի փոփոխությունը համապատասխանեցնելը նոր մարտահրավերներին կարևորագույն խնդիր է: Այս մարտահրավերների մեջ մի կարևորագույն բան ևս կա: Այն, ինչ այսօր սովորեցնում ենք երեխային դպրոցում, դա արդեն հնացած է: Հնացած է, որովհետև մասնագիտությունների 80 տոկոսը, որոնք այսօր կան և պահանջված են, 10 տարի առաջ գոյություն չունեին: Այն մասնագիտություններով, որոնցով աշխատելու են մեր երեխաները, որ այսօր դպրոց են հաճախում, դեռ չեն հորինվել: Դա նշանակում է, որ այս փոփոխական աշխարհում մենք պետք է գտնենք այն, ինչը անփոփոխ է, որի վրա կկարողանանք այդ կրթությունը կառուցել: Այստեղ առաջնահերթությունը տրվում այն առարկաներին, ինչպիսիք են բնագիտությունը կամ մաթեմատիկան: Այսպես կոչված STEM /բնագիտական, մաթեմատիկական, տեխնոլոգիական և ինժեներական/ առարկաների զարգացումը ՀՀ կառավարության ծրագրի գերակայությունների մեջ է, և մենք ծրագրեր ենք իրականացնում այս առարկաների զարգացման ուղղությամբ:

Երբ խոսում ենք կրթական փոփոխությունների մասին, պետք է հասկանանք մի բան. կրթությունը ամենադժվար փոփոխվող ոլորտներից մեկն է. Ինչու՝ որովհետև կրթության ոլորտի ցանկացած փոփոխություն կախված է մարդու փոփոխության հետ: Եթե մենք կրթության մեջ ուզում ենք նոր մտեցում՝ նշանակում է ուսուցիչը, դպրոցի տնօրենը, ծնողը պետք է նորովի մտածեն, իսկ սովորողները այլ նպատակներով ու մտքերով պետք է մտնեն դպրոց: Հանրակրթության ոլորտում փոփոխություններ անելու համար նշանակում է մոտ 1 մլն և ավել մարդկանց մոտ ինչ-որ բան կարողանալ փոխել: Այս իմաստով փոփոխության ամենակարճ ճանապարհը տեսնում ենք դպրոցների տնօրենների միջոցով, որոնք ՀՀ-ում 1400-ն են և ուսուցիչների միջոցով, որոնք շորջ 37000 են: Մենք հասկանում են, որ ցանկացած փոփոխության և կրթական բարեփոխման հետևում կանգնած է ուսուցիչը: Կարող ենք

ունենալ լավ դասագիրք, բայց եթե ուսուցիչը պատրաստ չէ պարապել այդ դասագրքով, մենք չենք ունենա փոփոխություն, իսկ հակառակ պարագայում, եթե ունենք լավ ուսուցիչ, բայց ոչ այնքան լավ դասագիրք, ուսուցիչը կկարողանա կրթության որակ ապահովել: Այս իմաստով առաջին կետերից մեկը ուսուցչի վրա կենտրոնացումն է և ուսուցչի դերի, հեղինակության բարձրացմանն ուղղված միջոցառումների վերանայումն է ՀՀ-ում՝ 2 հիմնական ուղղություններով: Մեկը ուսուցչի որակն է՝ սկսած մանկավարժական կրթության պատրաստումից մինչև վերապատրաստումը և ազատության աստիճանի շնորհումը ուսուցչին: Որպեսզի դպրոցում ուսուցիչը ունենա այնքան ազատություն, որքան կարող է վերցնել իր վրա: Մեր կրթական ծրագրերը պետք է լինեն օրինակելի և գործիք այն ուսուցչի համար, ով ունի դրա կարիքը, բայց մինևույն ժամանակ չսհամանափակեն այն ուսուցչին, ով ունի ստեղծագործելու մեծ հնարավորություն: Մյուս ուղղությունը սոցիալական բաղադրիչն է: Պետք է հասկանանք, եթե չենք լուծում ուսուցչի սոցիալական խնդիրը, ուրեմն չենք կարող և նրանից ակնկալել լուրջ փոփոխություններ: Այս իմաստով մի քանի ծրագրեր են իրականացվում՝ սկսած դպրոցների ֆինանսավորման համակարգի ամբողջական վերանայումից, մինչև ուսուցիչներին ըստ որակի գնահատման և ըստ այդմ տարբերակված աշխատավարձերի սահմանման հնարավորությունից:

Կցանկանալի խոսել նաև կրթության ոլորտում արձանագրած հաջողությունների մասին:

Ունենք բազմաթիվ օրինակներ, որոնք ոգեշնչում են: Օրինակ՝ «Դասավանդիր Հայաստան» շարժումը: Ծրագիրը իրականացնում են մարդիկ, ովքեր ուսուցչությունը դարձրին առաքելություն: Դրանք երիտասարդներ են, ովքեր գնում են հեռավոր գյուղեր և նոր շունչ են հաղորդում գյուղին ու գյուղի դպրոցին: Այդպիսի նախաձեռնություններից մեկն էլ «Արարատյան բակավարժիատ» ծրագիրն է: Այն կրթական հայալեզու ծրագիր է ամբողջությամբ ստեղծված Հայաստանում, որն ունի միջազգային ճանաչում և համարժեք է անգլիական A-Level և ամերիկյան Advanced Placement համակարգերին: Այսինքն երեխաները հայկական դպրոցում հայերենով հանձնելով քննությունները ստանում են դիպլոմ, վկայական, որոնք առանց լրացուցիչ քննությունների ընդունվում և կրեդիտավորվում են աշխարհի լավագույն բուհերի կողմից: Այժմ քայլեր են արվում ծրագրի տարածման ուղղությամբ ՀՀ մարզերի ավագ դպրոցներում և Արցախում: 2018թ. կսկսեն այդ կրթական ծրագրով որոշ դպրոցների ընդունելություն:

Անշուշտ բոլորս գիտենք Թումոյի մասին, որը իր գործունեությամբ նոր փոփոխություն բերեց: Այդ երեխաներին մենք անվանում են «Թումո սերունդ», իսկ նրանց տեսնելով հասկանում ես, որ ապագան հստակ է և խոստումնալի: Թումոն կարողացավ ստեղծել շարժում՝ դեպի կրթություն, դեպի տեխնոլոգիաներ:

Այսօր բազմիցս խոսվեց սփյուռքի դերի մասին: Մենք հիմա գտնվում ենք այն կարևոր կետում, որ սփյուռքից ոչ թե միայն ստանալու բան ունենք, որպես

Հայաստան, այլ նաև տալու բան ունենք: Նույն «Արարատյան բակալավրիատ» ծրագրի շրջանակում միայն «Այբ» դպրոցում ունենք 20 ընտանիք, որոնք վերադարձել են Հայաստան կամ տեղափոխվել են իրենց երեխաներին լավ կրթություն տալու համար՝ ապահով միջավայրում և հստակ արժեհամակարգով: Միջավայրում, որտեղ օտար երեխա չկա, բոլորը հավասար են. միջավայրում, որտեղ համաշխարհային առողջապահական ասոցիացիայի գնահատականով աշխարհի հնգյակ լավագույն երկրների մեջ է երեխայի համար ստեղծված պայմանները: Գալիս են ԱՄՆ-ից, Կանադայից, Անգլիայից, Ռուսաստանից և այլ երկրներից: Սա մի բան է, որը մենք կարող ենք առաջարկել սփյուռքին: Վառ օրինակներից է UWC Դիլիջանի միջազգային դպրոցը, որտեղ այսօր սովորում են 70 և ավել երկրների երեխաներ: Այդ երեխաների ծնողները Հայաստանին են վստահել իրենց երեխաների կրթությունը: Սա կարող է կրթություն ստանալու շատ լավ հնարավորություն լինել աշխարհասփյուռ հայության համար:

Մեծ հաջողություններ են «Արմաթ» ինժեներական լաբորատորիաների ցանցի տարածումը: Կրթության ոլորտում ունենք նաև թիմային հաջողություններ: Առարկայական միջազգային օլիմպիադաներում ամեն տարի մեր դպրոցականները արժանանում են մեդալների, որը համակարգային աշխատանքի արդյունք է: «Այբ» դպրոցի ռոբոտիկայի թիմը 2 տարի շարունակ ԱՄՆ-ում ամենահեղինակավոր National Robotic Challenge մրցույթից վերադառնում է արծաթե և բրոնզե մեդալներով, Թումոյի թիմը այս տարի մրցույթից վերադարձավ բրոնզե մեդալով: Եվ ամենաուրախալի լուրը, որ Կարբի գյուղի նախաձեռնությունը ներկայացնող բացառապես աղջիկներից կազմված «Մեկ քայլ առաջ» թիմը ԱՄՆ-ում Միլիկոնյան հովտում տեխնոլոգիական մրցույթի ժամանակ ստացավ կարևորագույն մրցանակ:

Ամփոփելով զեկույցը կցանկանայի ասել, որ միասնական գործունեությամբ մենք շատ բանի կարող ենք հասնել, իսկ սփյուռքի մասնակցությունը այդ գործունեությանը հիմնականում տեսնում ենք գաղափարների, փորձի տեսքով: Այսինքն՝ փորձն ու մշակույթը, համաշխարհային համակարգերի լեզվով խոսելու կարողությունը շատ կարևոր է մեզ համար: Կոչ եմ անում միասին այս նախաձեռնություններն ու ծրագրերը առաջ տանելու համար:

ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղեակալ

Դավիթ Սահակյան